


Շնորհակալագիր

Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարանի
ռեկտոր պարոն Արմեն Մուրադյանին,
ՀՀ քաղաքացի Գրիգոր Իսախիրյանից

Հարգելի պարոն Արմեն Մուրադյան, իմ երախտագիտությունն եմ հայտնում
<<Հերացի>> թիվ 1 հիվանդանոցային համալիրի պլաստիկ վերականգնողական
վիրաբուժության և միկրովիրաբուժության բաժանմունքի բուժանձնակազմին ի
դեմս ինձ վիրահատող և բուժող բժշկուհի՝ Թեհմինե Հմայակի Ասատրյանին:

2019թ. հոկտեմբերի 31-ին՝ փայտ կոտրելիս, անզգուշությամբ կտրեցի ձախ
ձեռքիս միջնամատը: Անմիջապես գնացել եմ Էրեբունի բժշկական կենտրոն,
որտեղ միայն ռենտգեն հետազոտություն են կատարել և հրաժարվել են
վիրահատել, ասելով, որ նման վիրահատություն չեն կարող անել: Էրեբունի
բժշկական հիվանդանոցից ինձ ուղարկեցին Երևանի <<Հերացի>> թիվ 1
հիվանդանոցի միկրովիրաբուժության բաժանմունք: Այնտեղ ինձ ընդունել է
հերթապահ բժիշկ՝ Թեհմինե Ասատրյանը, ով միանգամից հանձն առավ մատս
վիրահատելու աշխատանքը և սկսեց վիրահատությունը: Ինձ թվում էր, թե մատս
անհնար է վերականգնել (այն ամբողջությամբ կտրվել էր): Բայց բժշկուհին
վիրահատությունից առաջ ինձ ոգեշնչեց ու ասաց, որ ամեն ինչ լավ է լինելու և
ինքը ամեն ինչ կանի, որ մատս վերականգնվի ու աշխատի: 7 ժամ տևած
բավականին բարդ վիրահատությունը, գիշերը անոթի փակվելու և սնուցումը
կտրուկ վատանալու կապակցությամբ, նորից վիրահատելու կարիք առաջացավ: 6
օր անցկացրեցի հիվանդանոցում, որտեղ Թեհմինե Ասատրյանի
ղեկավարությամբ շրջապատված էի բուժանձնակազմի հոգատարությամբ,
ջերմությամբ և ուշադրությամբ:

Շնորհակալ եմ, որ կան այդպիսի սրտացավ ու գիտակ <բժիշկներ, որոնք
անում են անհնարին:



ՀՀ քաղաքացի

Գ. Իսախիրյան

02.12.2019թ.